

Արձանագրություն հ.2

ԵՊՀ ՏԿՖ գիտխորհրդի 29.04.15 թ. կայացած նիստի

Ներկա էին խորհրդի 29 անդամներից 27-ը:

Օրակարգում՝

Ամբիոնների հաշվետվություններ /02 և 03/:

Ընթացիկ հարցեր:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկան „Կառավարման և գործարարության,, և „Ֆինանսահաշվային,, ամբիոնների վարիչներ՝ պրոֆ. Ս.Ղանթարջյանը և դոց. Հ.Մնացականյանը: Նրանք ներկայացրեցին իրենց կողմից ղեկավարվող ամբիոնների աշխատանքների ընթացքը հաշվետու ժամանակաընթացքում/ զեկուցումները կցվում են/ :

Պ-ն Ղանթարջյանի կողմից առաջարկություն արվեց, որ նրանք, ովքեր ղեկավարում են թեկնածուական ատենախոսություններ, պետք է համարվեն զբաղված գիտահետազոտական աշխատանքներում և այդ մասին զեկուցագիր ներկայացնել ռեկտորատ:

Արտահայտվեցին

Այդ առաջարկությանը հավանություն տվեցին պրոֆեսորներ Վ.Բոստանջյանը և Ա.Մարկոսյանը: Պետք է հիմնավորել այդ առաջարկը և նաև հասկանալ թե ինչու են մեր ֆակուլտետի ասպիրանտական տեղերը քիչ: Կրթության վերարտադրության համար գոնե պետք է հետևողական լինել , որ ասպիրանտական տեղերը տրամադրվեն:

Հ.Սարգսյան: Իրավաբանները մոնոպոլ դիրքում են գտնվում, բայց տնտեսագետներին նույնպես չեն անտեսում: Ասպիրանտուրայի իրավիճակը հետևյալն է ԵՊՀ-ն ունի 143 ամբիոն, իսկ ասպիրանտուրայի տեղերը 40-ի մոտակայքում են, այնպես որ ուզենան էլ ավելի շատ տեղեր հատկացնել հնարավոր չէ: Գիտության և կրթության նկատմամբ վերաբերմունքը անոմալիա է: Բանակի մասին օրենսդրությունը պետք է կատարելագործել: Տղաները պաշտպանում են, որ բանակ չգնան: Կառավարման և գործարարության ամբիոնի կարևորությունը շատ բարձր է: Ամբիոնը այսօր իներցիայով

է շարժվում: Պետք է բարձրացնել խնդիրները և նաև տեսնել, որ դրական երևույթներ նույնպես կան:

Ֆինանսահաշվային ամբիոնի կատարած աշխատանքի մասին պետք է ասել, որ ունենք երիտասարդ, եռանդուն ամբիոնի վարիչ: Ամբիոնն առանձնանում է նրանով, որ մշտապես պահանջված է ուսանողների կողմից: Երկրորդ դրական բնութագիրը դա համատեղությունների ինստիտուտի առկայությունն է, որը պետք է կարողանանք շատ էֆեկտիվ շարունակել: Ներկայումս ԵՊՀ-ն հիմնադրամ է դարձել և դրա պայմաններում հնարավորություն է ստեղծվում նոր միջոցներ հայթայթել: Շնորհակալություն եմ հայտնում ամբիոնի անձնակազմին, ծրագրերի ղեկավարներին լավ աշխատանքի համար:

Երկու ամբիոնների վերաբերյալ հաղորդումները պետք է ընդունել ի գիտություն և հետագա գործունեությունն ավելի կատարելագործել:

Ընթացիկ հարցերի շրջանակում դիտարկվեցին թեմաների վերահաստատման հարցը / քաղվածքները թղթապանակում/:

Գիտխորհրդի նախագահ,
տ.գ.դ., պրոֆեսոր

Հ.Լ.Սարգսյան

Գիտխորհրդի քարտուղյար,
տ.գ.թ., դոցենտ

Ա.Ն. Համբարձումյան